ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

« 11 » օգոստոս 2025 թ. N 10-25

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21.03.2025թ-ին կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-Վ-2-2» պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Աքսել ՍՊԸ-ի միջև 2025 թվականի մարտի 21-ին կնքվել է «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-Վ-2-2» պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագրով և մատակարարման ժամանակացույցով նախատեսված ապրանք (տակդիր մեծահասակների):

Աքսել ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասով, վերը նշված մատակարարման պայմանագրի 2.1.7 կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով խնամքի կենտրոնի տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ տնօրենի տեղակալ Արմեն Ավագյանի 06.08.2025թ. զեկուցագիրը՝

ՈՐՈՇԵՑԻ.

Սույն թվականի օգոստոսի 8-ից միակողմանի լուծել Աքսել ՍՊԸ-ի հետ 21.03.2025թ-ին կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-Վ-2-2» մատակարարման պայմանագիրը:

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԽԼՈՅԱՆ

Հասցե՝ ՀՀ, ք. Վարդենիս, Զ. Անդրանիկի 4, 1-ին նրբ., էլ.փոստ՝ vardenisinternat@mail.ru